

# ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐ

ԱՐՄ. ԹԱՄԱԶՅԱՆ

ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

ՊԵՏՐՈՎԱ  
ՅԵՐԵՎԱՆ

1930

891.99.  
ρ-20

6 NOV 2011

№ 4

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐ

№ 4

291-99

2-20

ԱՐՄ. ԹԱՄԱԶՅԱՆ

## ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

(Պատմվածքների հավաքածու)

ՊԵՏՀՐԱՏ 1930 թ.

17.04.2019

30714

MS VOL 3

ԳՐՔՈՒՅՑԱՆ ՆՎԻՐՈՒՄ ԵՄ  
ԱԼԼԱՇՎԵՐԴՈՒ ՊՂՆՉԱԳՈՐԾԱՐԱՒԻ ՅԵՎ  
ՇԱԽՏԵՐԻ ՑԵՐԿՈՒ ՀԱԶԱՐԱՆՑ  
ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ

ՀԱՅՈՒՆԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ  
ԹԵՏՐՈՒՏ № 1446.  
ՊԱՏՎԵՐ 503  
ԳՐԱՌԵՄԱԳԼԻՎԱՐ 6001 (Պ)  
ՏԻՐԱԳ 2500



44003 - 63

## ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

«Նըանք արդեն սկսել են  
ստեղծագործական կըրա-  
կով վառվելու:  
Ա. ԿՈՍԱԽԵՎ

ԴՐԱՑ, ԴԻՇԵՐԸ

Գործարանի մոտ որ ու դիշեր թշում և գալարվող  
ը, լէզում, հղկում ափերի քարերը: Յեվ յերբ սու-  
ծորում և յերկար ու դուրալի, ասես քաղցրու-  
ն և հոսում խավար ձորով:

Յերեկոները, յերբ մուժը ձորն և մտնում, քայլում  
տործարանի ու գետի միջն ձղվող յերկաթուղիով,  
թվում և, թե չուրջո մի առասպելական վայր և,  
ներյաթային դիշեր...

Մի կողմից լսվում են տասնյակ մեծ ու փոքր մե-  
սների, սղինձ հալող հսկա կաթսաների մոնչյունը,  
ո կողմից՝ փրփրարաշ ալիքների շառաչն ու միո-  
սկ թշոցը:

Բանվորական ավանի հարյուրավոր բնակիչները  
որեւ, մտերմացել են այդ ձայներին: Յերբ նրանցից  
ո զուրս և զնում ալանից, ասես ինչ վոր մի բան

պակաս և զգում—ականջներն ել չեն լսում չըսերի ու  
մհեցնաների յերգը:

Յերկաթուղու աչ կողմը՝ բարձրություն և ձորի  
յերկարությամբ, վորին աչքը հազիվ և կարում: Դենը,  
բարձրությունից ել են կողմը, ցերեկով զու կտևնես  
լայն գաշտերում շորորվող հաւկե՛ր, հաւկե՛ր և հաս-  
կեր... իսկ գիշերը, հեռվից, չըսերի վրայով միայն  
կլսես չների տիսուր վոռնոցն ու գայլահաւը: Հասկե-  
րիցն ել դենը սարեր՝ ստորոտները վարժաթվում խիս-  
տատոնների գոտիով: Զորում, զործալանի չուրջը,  
այդիներ կան շատ. ծառերը թիրքից տնքում են, ճյու-  
ղերը չոփում մինչև դետին:

Յերկաթուղու ձախ կողմը՝ զործարանն և փոված:  
կան շարքով կանգնած հանրակացարսներ, շենքեր,  
իրենց բնակիչների հատուկ կենցաղով ու սովորու-  
թյուններով: Վեց նոր չենքեր կան շարքով. նրանց  
բազմաթիվ սրատուհաններից յերեվում են առառ  
րույներ: Լույսերը վառ են և բազմերանգ, —կանաչ,  
կալմէր, կապույտ... Առես գիշերվա խավարում վեց  
չենքերում հրդեհ և մխում և տարբեր գույնի լիզուները  
դուրս են մեկնվել պատուհաններից: Յեթե յերեկով.  
արևի լույսի տակ դիտես չենքերը, կնկատես, վոր պա-  
տերը նոր են բարձրացել և գեռ թարմ են քարերի տա-  
շած տեղերը ու արեւ դեռ չի կիղել տանիքների թիթեղ-  
ների մուգ կարմիր գույնը:

Նոր չենքերի արանքում, պատերի տակ հողե ցածր  
տներ կան պազած: Նրանց բնակիչները րողորում են,  
վոր այլիս ներսն արեի շաղեր չեն ընկում, խոնավ ե...

Ասում են, վոր այդ հողե տները չինել են հույ-  
ները, այն ժամանակ, յերբ սուածին մնդամ ձորում հողը

արտնջացել և բահերի ու քաւնդների հարվածից և ձին  
քաշել և պղնձահանքի սուածին ընուը:

Հանրակացարսներից և զործարանից են կողմ՝  
հեռվում, պղնձահանքի սարեր կան զորչ ու կարմբա-  
վուն քարերով:

Երանք չեն յերեւում գիշերվա թանձր խավարի մեջ:

Գիշերը յերկու անգամ վիսիվում են հերթերը:  
Մուլչի առաջին կանչին բացվում են հանրակացարսն-  
ների գոները և բանվորները քարքարոս արահետներով  
շատպում են գեղի ցեխերը: Աւշացողը պիճակի մի թիւ  
հագնելով և տնից զուրս զալի, աչքերը տրուելով համ-  
եռմ:

Մի յերեսասարդ սուլիչի վերջին կանչին իջակ  
հանրակացարսնի յերբորդ հարկից և արակ ու թըմփ-  
թմփացող քայլվածքով անցավ հին, հողե տակի մո-  
տով: Տնակի խորխուլ պատերն զգացին ամուր վաղքը,  
և առաստաղը հող մաղեց:

— Ա՛յ թաղեմ քու արել հա՞... Տեհաս ո՞վ եր,  
ուրսից քաշահարամ թոնթորաց մի պառակ ձայն:

ՈՊԱԿԻ ՍՊԱՌԱՄ Ե

Զորի արդիներում գեռ առաջին մոշահավը թիվին  
չեր խփել ծառերի արանքում, յերը բացվեց մեխանի-  
կական ցեխի գարպասը:

Հետզտե հավաքվում են ցեխի վարպետներն ու տ-  
շակերտները, —ծիծագով, կատակով:

— Ես որն ել շուտ անց կացնենք, —Հորանջից ծե-  
րուկ վարպետ Միտն, —ե՛կ, ծերացա, ջահելության  
որերից մի բան չհասկանալով:

— Ախր ծերուկ, եղ միրուքդ վո՞ր աշխարհում ես  
ոպիտակեցրել, վոր կարգին որ քաշեյիր...

— Յես ել հենց եղ եմ ասում, վարդիս: Մենք, ձերես ել հաշվի մեջ չենք. Հիմա հերթը ձերն ա... .

— Միու ջան, —թռվասարով մեջ մտավ կոմյերիս Մուկուչը, —վո՞նց ա, քո կարծիքով յես «հաշվի» մեջ եմ, թե չե...

— Տո, ախմախ, —կատակեց աչքը շիլ Գարսն, —վոր կիմոն «հաշվի» մեջ ա, բա գու զո՞ւբան ես...

— Հա՛... հա՛... հա՛... —քրքջացին բոլորը, —ինչ անուն տվիր ե՛:

Դեռ հնչում ե սուլիչը, ու բանվրներին կանչում կտրսում և նրանք վազում են ձեզով:

Սկսում ե մեծ առորյան:

Մեքենաները, վուկերն ու անիվները նրանց ձեռքերի տակ շունչ ու թափ են առնում և սկսում ե տենդապին աշխատանք:

Վաղ առավոտից մինչև յերեկո դուռում ե վենտիլատորն ու թարմ ող տալի ներսը: Իսկ մոտիկ ցեխում, կոմպրեսորները համերգ են սարքել...

Մեխանիքական ցեխի վարպետ վանոն մի քանի անգամ աշխատ ածեց արհեստանոցը և տեսնելով, վոր կիմոն բացակայում ե, գլուխն որորեց... Այդ բոսելին վարպետին ուշագիր նայողը կնկատեր, թե ինչուս նրա աչքերում խաղում է մի անհանդստություն և ձակատի կնճիռները մի պահ շարվում են կողք-կողքի:

— Տեսնո՞ւմ եք ընկերներ, —մոայլված խոսեց վարպետ Վանոն, —շուտով նախաճաշի սուլիչը կհնչի, բայց դեռ կիմոն չի յեկել: Ըսե՞նց ենք դործը տանելու:

— Այս մենակ կիմոն չի: Մյուս ցեխերում ել կան լադիրք: Յես ասում եմ, դրանց հարցը կտրականապես

գնենք յեկող արտադրական նիստում. թե չե ըսհենց ըլլիլ չի: Պաի հուզ տանք դրանց, —վառելորված խոսում և Մուկուչը:

— Կիմոն հենց գիտի, —գլխարկը հետ գնելով վրա րերեց աշակերտ Արագիսին, —թե հստեղ դյուղն ա, մոր կամի վրա ննջալով խուրձը կալոի: Եհե՛յ...

— Կարիք չկա իզուր խոսել. Կիմոն հեշ, հաշվեց դուրս ա, —ասեց Միոն:

Յերկու վոտքեր ներս յեկան թույլ, գետինը քըս-քսելով: Կիմոն եր, —անլիւա յերեսով, գլխարկը հետ և ծուռ ծածկած, ծխախոտը բերանին, ու մի փունջ խճճված մազեր՝ կողիբուի տակից կախ ընկած: Ամեն որվա պես ելի արձակած են բուռղի կոճակները, ու տակից յերելում ե կեղտուտ շապիկի վիզը...

Իսկ մինչեւ նրա ներս դալը, մեքենաները քանի՛քանի՛ պտույտ ելին զործել: Դանդաղ քայլերով մոտեցավ վարպետ Ալեքսանին.

— Ե՛յ, բան ու ման կա՞ անելու, տուր:

— Զե՛ «չըկա», բոշբողազ: Փոխանակ ուշ դալուդ մասին վարիչին բացատրություն տալու, ծաղրանքով ես զբան ու ման» խնդրում:

— Դե՛ լավ զու յել: Ցայց մի տուր, վոր մեծ ես. Եստեղ խաղայինության տեղ չի:

— Յե՞ս եմ խաղելինի նման, թե դու: Ալսը դու յել գիտես, վոր զործ շատ կա անելու, համա ելի հարցնում ես: Կոնվերտի համար շինվող վինափեները կիստ ա, վերջացրել ես:

— Վո՞չ:

— Դե վերցրու և աշխատի:

Կիմոն արհամարհական հայացք ձգեց Ալեքսանի

վրա և գանդաղ շարժվեց, ասես «զիշերը կարճ դարի լինել հնձած»:

— Անունդ ել կոմսամուլ ես զբել, ու մեծ-մեծ բըրդում ես ժողովներում: Միայն խոսելը չե բանը, — կիմոյի հետեւց ձայն տվեց Ալեքսանը:

Արհեստանցի վարիչ Վանոն հանկարծ հեռվեց նրանց կիմոյին, վոր գողնոցով բերում ե վիճուկները:

— Եսը այել շան վորդին, —մտածեց նա, — մտիկ վոնց աման դալի, վոնց վոր շան բերանից իւլուծ փալաս լինի:

Ապա վարպետ Վանոն մոռեցավ կիմոյին, սպասեց, մինչեւ վոր գատարիկի գողնոցը... կանգնեց ուղիղ, անշարժ, ձեռքելը հետեւ վրած: Նայում եր այնպես, վոնց վոր գեմքի վրա դառն ծիծաղի հետքեր լինելին սառած: Աչքերը կլոցեց, —ասես զիմացից արել ծակում եր, —ու անթարթ հայացքը մեխեց կիմոյի աչքերին. նա տառմ եր մտքում.

— Խեղճ ես, նաև հպարտ, զոռող: Մի՞թե վորոշել ես դիտավորյալ ուշանալ: Քեզ ցույց կանք մեր ուժը, վոր աշխատես, լինես մեղ հետ, յիթե վոչ, կրթողնես դորձարանը...

Սուր, ուղղակի խայթող եր վարպետի հայացքը կիմոյի վրա: Ակելի լավ չէ՞ր, խոսքով նախատեր, հայհոյեր, միայն թե իրեն չնայեր այդ հշտարի սկս ծակող հայացքով:

— Կիմո, միեւթագետ խոսեց վարպետ Վանոն, — քսան բոտե ուշացել ես ու համարյամ միշտ ուշանում ես (ու ճկութը ծալեց): Քանի որ ա, վիճուկները չես պատրաստում, ձգձգում ես. դա յել առաջի կետքը չե (ծալեց յերկրորդ մատը): Զգիտեմ ել վորն ասեմ: Զի՞

կարելի այլպես: Զի՞ վոր յես ել գործի պատասխանութու, ձեմ: Յես ել ձեզանով եմ գործ անելու, ձեզանով պատասխան տալու: Մեկն-յերկուուր լավ աշխատելով՝ հեջ, բան չի զարս գա, պետք ա բոլորս ել լավ աշխատենք: Ախր զու կոմյերիու ես, քո վրա ավելի մեծ ողարք կա զրած: Համար զու՝ հեջ: Թե քեզ տառն, թե մի լիս քարի: Մի լավ թամաշա արա քեզ, տես վանց հաղնված, վոնց ես ժայ զալի արհեստանցում, տուս թիրած լինես:

Այս խոսակցությունը կտարգիւմ եր վարպետների և աշակելաների աշքից հեռու—արհեստանցի մյուս ծայրում: Կիմոն ցանկանում եր «վոտքը քաշել», ալուսիւ այդ ձեշոյ խոսակցությունից:

— Դե, ինչ անեմ, —աշխատեց արդարանալ Կիմոն, վոտքի մի ծայրով քանդելով հողը, —մեկ-մեկ զյուղ եմ գնում, ժողով ա լինում, ես ա, են ա...

— Ի՞նչ... միթե մյուսներս ժողով չենք դնում: Բոլորը բողոքում են, պահանջում, վոր յեթե այդուհու շարունակես, քեզ պետք ա ուղարկել «րազնի» կամ մի ուրիշ ցելս:

Կիմոն խկույն պատկերացրեց «րազնի» ցելսի աշխատանքները: Այսուել բանվորներն ամբողջ որը քար, հող, ցեխ ու կիր են կրում, ձեռքերը չանգամում, ջարդում, արյունոսվում, քրտինքի մեջ լողում են... «Չէ՛, չէ՛...» մտածեց Կիմոն ու սարսափ զլաց «րազնի» ցելսը գնալու մտքից:

Վարպետ Վանոն նորից պնդեց.

— Լսո՞ւմ ես, ել գործից չպետք ա ուշանաս: Պետք ա յեռանդով աշխատես, վոնց վոր սեփական գործի վրա: Զակետք ա հետ մնաս քո ընկերներից:

— Հնկերներս, հա՞—ըթունքները սղմեց կիմոն, — յիս գիտեմ, թե նրանք ինչպես նախանձն են... Դու յեւ ես նախանձ, բյուրովկրատ, ու ել չզիտեմ թե ինչ, — վճռականություն գործողի պես ասեց կիմոն, — բոլոր ուղղում եք ինձ վոտի տակ տալ:

— Հը՛, — գառնորեն ժպանաց վարպետ Վանոն, — իմ մասին յես վոչինչ չեմ պատասխանի, բայց դու ստում ես ընկերներիդ մասին: Նրանք աղիիվ տղերք են, իսկական բանվորներ: Յեթե դու լուր ես, սիմուլյանտ, բոլորն ել իրավունք ունեն վրագ ըողոքել:

— Հեքիաթներ մի պատմի և քարոզներդ նրանց ասա...

— Ե՛, — հառաշեց վանոն, — դեռ ջահել ես, կը դատիքարակենք. դու վոչ առաջինն ես, վոչ ել վերջինը կլինես:

— Ինձ պետք չե, նրանց դաստիարակեք:

— Քե՛զ ել, նրանց ել, բայց դու դրա կարիքն ովելի շատ ես զգում...

### ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ԽՈՒԶԱԲԿՈՒՄ ԵՆ

— Լսի՛ր, կիմոն, — շարունակեց վարպետ Վանոն, — դիտե՞ս, վոր մենք սոցիալիստական մրցման մեջ ենք մտել պլավկայի ցեխի հետո: Մեր ցեխում ել պետք ե ներքին մրցակցություն լինի: Մեր մեջ ով հետ մնա, վայ նրա մեղքը հա՞: Նամուսի խնդիր ա, ինչո՞ւ չպետք ա մենք պատվով դուրս գանք: Պետք ա դու յել քեզ մի լավ թափ տաս, ել լոդրություն չանես:

— Յես լողք չեմ, կարգին խոսա, — վիրավորվեց կիմոն, — յես քո յերեխան չեմ. դու իրավունք չունիս քանվորին վիրավորելու:

— Ի՞նչ չուտ ես նեղանում: Իսկ զու իրավունք ունե՞ս այսուել, գործարանում ավելորդ տեղ բանել հ չաշխատել այնպիս, ինչպես մյուսները, քո լնկիրները:

կիմոն միայն ասաց.

— Լա՛վ...

Նրա ներքին ըթունքը սղմվեց ատամների արանքում:

— Տղերք, — բարձրաձայն գոչեց Մուկուչը, — գործովկր վոր խփի, զնանք գործարկոմ, ասենք կիմոնին «սե աւխտակ»-ում մի լա՛վ «մուշտիք», զուցե խերքը զլուխը գա: Թե չե դա՞...

կիմոն մի ծուռ հայացք ձգեց Մուկուչի կողմը և ինքն իրեն մինթմինթաց.

— Շուն շան վորդի, հորդ բահը գործարանի հիմքը վորելիս կոտրվեց ա՛յ...

— Ե՛հ, — հառաշեց տոկար Սերգոն, յերկաթը «պրեսի» տակ կտրելիս, — վո՞նց ել «կիմ»-ը խվել արձքին:

\*\*\*

— Կիմոն, այսոր վիճակիները պետք ա պատրաստես, ինչ գնով ել լինի, — ցածը, բայց խրոխտ տոնով զիմեց Սերգոն:

— Այսոր չեմ կարող վերջացնել, — համառորեն թոնթորաց կիմոն:

— Լսիր, — գիմեց Սերգոն, — ի՞նչ ես վալաս դարձել: Տեսնո՞ւմ ես ընկերներդ արդեն բողոքում են, ծաղրում, վաղին ել հարցգ կդնեն: — քչե՛լ... Մեկն ել յե՞ս՝ կհամաձայնիմ: Ինչո՞ւ յես համարյա ամեն որ ուշանում: Այնոին ես աշխատում, վոնց վոր թշնամու դորձինի:

— լավ, լավ, դու յել նրանց նման փեշս մի բռնի, ու քարոզ կարոտ: Դու յել ես ոկտում հաղածել ինձ:

— Հաղածել... Ե՞ղ վարսեղից հնարեցիր: Մենք բուրս ել խոսում ենք զործարանի շահերից: Հասկացիր, վոր մրցման մեջ ենք մտել պլավկալի ցեխի հետայիժմ ամեն մեկս ավելի լարված և հոգատար պետք ու աշխատենք: Կիրակի օրը սրայմանագիր ենք ստորագրելու: Գե՛, չուտ անցի վիճակիների գործին:

— Այդուեղ թողեք քարոզը, տղերք, եղ հետո, չուտով սոցմբցում աղալու, — նկատեց մեկը:

\*\*\*

Աշխատում է Կիմոն, բայց ինչ վոր մատ և զզում իրեն, ինչպես զրեթե միշտ: Տրամալըություն չկա աշխատելու: Կոանալիս, ասես ձարձատում, կուրտում և վողնաշարը: Վերջապես ինչո՞ւ յեն ստիլում իրեն արագ, չարիսի ողես չարժվել... թամամ շան կյանք և քաշում:

Ափոս'ո չեր գյուղը: Խաղա՛զ, հանգի՛ստ: Որը ճաշ եր քանում, վոր արթնանում եր... Ի՞նչ արժեր կահաչ սուրերում ման գալ, սառը ըրով սիրտ հովացնել: Էսկ այստեղ, (աղմվում են սուամները) սուամնի պես հուզ են տալի չորս կողմից: Ո՛չ, այստեղ զժվար ե, շա՛տ և գժվար:

Մտածմունքներից սթափեց Կիմոն: Ծինելույզից բարձրացող ծուխն իշել, անկամ մտել և արհեստանոց և նա չնշում է ծծմբախառն ողբ: Խոկ արկը ներս և ընկել լայն պատուհաններից ու գոնից և ներսն ամեն ինչ, — մեքենաները, ողբ, սաստիկ տաքաշել են: Մեայն վիճակից առաջ կողմից մաքրում ողբը: Շուրջը նորից փոկերն են պտուլում խելապար

թափով, իսկ «պրեսը» հանդարտ ու հաղթական թափով իջնում և և կտրում բերանում՝ զրած յերկաթը, ուկրի հաստությամբ:

Ժամը յերկուսին սուլիչը ճշաց կիմոն խկույն վեր թուավ, ուզեց վայր ձգել ձեռքի գործիքը և զուրս գնալ, բայց հանգիստից աչքը շլի գարսով նախատինքով ուղղած հայացքին, վոր ասում եր.

— Կը մեռնե՛ս, յեթե մինչեւ վերջ աշխատես...

Կիմոն մի քանի բուզե ես աշխատեց ու բոլորի հետ միասին զուրս յեկավ արհեստանսցից:

Դրաւմ պլավկան և մոնչում, ճշում և իր թափի զիմաց մրցման կանչում անիմներին ու վոկերին:

Յերբ քարքարոտ արահետով կիմոն բարձրանում եր զեպի հանրակացարանները, նա այնտեղից նայեց իրենց յոյուզի կողմը, ակսով մանկությունն անցկացրած սուրերը, հիշեց անհոգ սպասանեկությունը... Հրեն, հեռվում, «Սառնաղբյուր»-ի կանաչուաներում յերեւմ են բինաները... Հիմա այստեղ տաշուելը լի յեն մածոնով, կաթով, արածանով... Աւ Կիմոն մի խոր հոգոց բացեց, քթի ծակերից բաց թուղներով ծխախոտի առան ծուխը:

\*\*\*

Հետեյալ առավոտ, ընդմիջումին, դործարկոմի գրասենյակի առաջ բանվորները խանվել եյն:

Պատից կախված եր «ոհ տախտակը», վորի մեջ սպասարակվում եյին չինող բանվոր: Դրանց մեջ յերկորդ տեղը բանել եր Կիմոն.

Կիմոն Պեպանյան, կոմյերիտ, ունի անհաշիկ պրոդուկտ, սիմուլացիա, դեպի գործն անփուլթ վերա-

քերմունք՝ արվում և վերջին նկատողություն՝ կրկնվելու դեսպում վոնդել գործարանից :

Կիսագրազետները տառետառ, գրագետներն եւ մարդկարդունքները, վորը ձիճաղում, հայշոյում, վարել խոզում եւ :

— Ե՞ս, ջահել ա, կրպաստի, վոր վոնդես, լու ինչո՞վ կապրի...

Կիմոն ել գուգոկին արհեստանոցից զուրս յեկար : Տուն եր գնում : Տեսավ, վոր «սե տախտակիր» ժրչութափած և բազմաթիվ զրուխներով, ուրիշ ճանապարհով տուն դնաց :

— Ինչո՞ւ տեսնեն ու վրես ձիճաղեն, — անցավ մոքովը :

\*\*\*

Կոմսոմոլի ըրջկոմի համար նոր քարտուղար եր յեկել : Նա գլխարկով վերցրած, գանգուր մազերով գլուխր թեքել եր սեղանին ցրված թղթերի վրա, զործերին եր ծանոթանում :

Կիմոն յերբ իմացավ նոր քարտուղարի դալու մասին, սուլիչին քայլերն ուղղեց զեպի այնուհետ, մասի գրասենյակ և մի քանի բազեյից հետո նստեց քարտուղարի մասի աթուրին :

Քարտուղարն ու շագրությունը զարձրեց Կիմոյին . — Խնդրեմ, ընկեր ջան, տառ :

Նրա աչքերից ծորող ժպիար ուրոտ ուզավ Կիմոյին . . .

Սկզբից խոսում եր յերկչում, բայց հետզետե վորեարեց :

— Յէս, ընկեր քարտուղար, աշխատում եմ մեխա-

նիքական ցեխում, ուզում եմ մի քանի խոսք տաեմ մէկը յեխի մասին :

Այսուղ Կիմոն տեղում թեթե չարժվեց, զիտորկը պատելով ձեռքում . . .

— Մէր վարիչը հին գել ա, նա Փրանցուզների ժամանակ ել ա մեր գործարանում յեղել ասում են, վոր բանվորների հոգին հանելիս ա յեղել . . . Հինը հերիք չէ, հիմա յել զիլիներիս նստել ա, կամսոմոլիստներիս ծուռ աչքով ա նայում : Հենց սրինակ, ինձ : Քիչ ա մնում, վոր քթիցս ջուր մզի : Նա ուզում ա, վոր ինքը լավագարդի գառնա գործարիկոմի ասաց : Նրանք ծաղրում են ինձ, հալածում, վորովհետեւ միայն յես եմ վարողականի սրալներն ասում, քննագատում :

— Շատ լավ, յես կաշխատեմ պարզել այլք խնդիրները : Բայց ի՞նչպես, թի «գարսկետը Ծնչում ա բան վորներին» . զժվարանում եմ համատալ : Զեր ցիրում բոլորը պետք է վոր վորակյալ, զիտակից բանվորներ իննեն :

— Զեմ տառմ բոլորին ա ճնշում, — վրա բերեց Կիմոն, — մի քանիսին, ու գլխափորապիս ինձ : Նա ուստամ մարդ ա, զիտի իր բանը . հնենց ա ճնշում, վո՞ր . . .

— Լավ, իսկ վարսկեան ինչո՞ւ յե «գլխափորապիս» քեզ ճնշում :

— Յես ի՞նչ զիտեմ, — առերբ թոթափից Կիմոն, — հալրամթ աչքին մին ու մին զժվար եմ յեկել : Հա՞ , մի անգամ պատի թերթում «կոթել» եյի, կարծեմ եղ բանից թշնամացավ . . .

— Լավ, զու զնա, սուլիչը խիեցին, ինչ վոր հարկափար ա յես կանեմ, — ու իր կեցած աշքերի խուզարկու հայոցքն ապես պիտիցինի աչքերին . . .



— ԶԵ՞ , ընկեր քարտուղար , յես խո քեզ չեմ խա-  
րում , —խոսում ե դիմացը՝ պատին հայելով , —ա՛յ ,  
խանդրում եմ , վոր ուղղակի շրջկոմի կողմից մեր ցեսի  
յերկու կոմյերիտին , են աչքը չի գարուին ու շատո-  
խս Մուկուչին նկատողություն անեն , վոր խելոք մո-  
նան , դիսցիպլինը խանդրեն վոչ : Խակ ցեսի վարիւն  
կանչի , աղմի «կոմտուուի գծով» , վոր տատմները շատ  
չը շահցածաւ :

Քարտուղարը թեթև ժպանց :

— ՀԵ՞ , ընկեր քարտուղար , ըտհենց կանես . չե՞ :

— Դու զարձիդ զնա , ուշանում ես , յես ամեն ինչ  
կանեմ :

— Այս մարդի մեջ մի փորացավ կա , —մտածեց  
քարտուղարը և ցանկացավ իր սուր հայացքով ամեն  
ինչ գանել կիմոյի աչքերում : Յեկ նրա հայացքը , ա-  
մսս զիսավով «նախառակին» , ինչ վոր թույլ տեղ չուշա-  
փեց . . . Կիմոն շփոթվեց , նորից նայեց պատին . . . իհամ՝  
այնակից մեկը լայն ճակատով ու ժպիսով զիտում ե-  
տահա նա յիլ և զննում , ստուգում իրեն :

Կիմոն ել վոչինչ չխոսեց : Բլուզի փեշերը մտաներէ  
ծայրերով տրորելով դուրս յեկավ , իր վրա սեփեսոն  
տանելով մի կասկածամիտ և խուզարկու հայացք . . .

## ԶՈՐԱՑԱԾ ԱՅՑԵՐԻ ԲՈՂԱՔՔ

Բանթողին կիմոն բանեց գլուզի ճամբան : Նրանց  
ոյսուզը չուրս վերատ հետու յեր գործարանից . ընկած  
կորմիր ու փխրուն քարերով սորբի փեշերին :

Մի ամիս եր , տանը չեր յեղել : Գնում եր , լուց  
սիրու չեր ուղում զնալ , վոտքերը քայլում եյին , լուց  
ասես զոռով եյին քայլում : Ութ ամիս աշխատել եր

կործարանում , լուց չեր կարողացել մորը կոպեկ ցույց  
տալ . . .

Ա՛յ , այդ բանկոսպի ճաշարանը . . . Տղերանցից  
վո՞րն եր , վոր մի քանի անդամ ուվորեցրել եր կոկոր-  
դը թաց անել «Կախեթի» կարմիր զինիով : Հետո զժի  
պես սիրեց գինին : Են որը ոք չեր լինի , վոր գինով  
չկոտրեր ծարավը : Ճաշարանից կարմրած աչքերով  
զուրս զալիս տղերքը չատ եյին տեսել , զգուշացրել ,  
վոր լավ բան չի սկսել , թող յերես դարձնի զինուց ,  
րայց ո՞ւմ կտսես . . .

Յերկաթսւզուց մի ներ կածան ձորի միջով ոձագո-  
ւար քարձրանում եր գեղի զյուզը : Կիմոն առաջ տե-  
սավ բլրի վերի թաղը , հետո ձորի տեսքը կար-  
միր կոմինդրներով : Կառւըներից ծուխ եր բարձրանում  
վուրգելով : Գյուզը հանդիսան եր յերեսում . վոչխարը  
հանդից տուն եր գարձել ու կոտիբում փոած խոսն եր  
վորոճում :

Կածանի մոտով թշչալով ինսում եր նրա մանկու-  
թյան ընկեր գետակը : Կիմոն նայում եր ծնկահաս կա-  
նաչին , ժայռերին , ջրի վագող ալիքներին , ու իր ման-  
կությունը հիշում . . . Քանի՞ քանի՞ անդամ և ընկեր-  
ների հետ լողացել այդ գետակում և անհոգ որեր անց-  
կացրել ձորի այգիների կանաչներում ու ծառերի տակ :  
Ի՞նչ լով ե ամառն այդիներում . . . Ծառերի տակ հայլ  
ես անում , հեռու պեծ ու կրակ չողից . իսկ չորս կողմդ  
ծառերի ճյուղերը գետնին չոքած տնքում են մբգի բե-  
ռից : Յերանի հիմա յիլ այնպիս փոքրահասակ ու ան-  
հոգ լինի , ապրի առանց ցալ ու հոգսի , վոր չատեն թե  
ինչու զործդ ժամանակին չես կտտարում , անպարտա-  
ճանաչ ես :

Ուրիշ է գործարանու : Զարս կողմէ յերկա՞թ , յերկա՞թ , կրակ և խպաղեմ ու խտապահանց մարդիկ : Մանավանդ ամառը : Եեղ ձորի մեջ գործարանի շանչը չի կողմից , արևիլ մյուս կողմից , քրտինք և , վոր քումում են մարմնից : Բայց զել լավն են եւ , վոր ամսի վերջում զանձապահի մոտից զուրս ես գալիս ակտա շունչ քաշերվ և ուրախանում , վոր կեն կըպրտես ծակված տրեխներդ , մաշված ոլիշակդ ու նորերը կառնես :

Կիմոն մոտեցավ իրենց տան դռանը . մայրը տունն եր կարգի բերում , հատակի թողին ավլում : Առաստաղից շարունակ հող եր մաղլում : Տեսավ վորդուն ու գեմքին մի ժոխու ծլեց գունատ : Ասես տաս տարվա «սալգաթ» տղեն եր իր առաջ : Ուզում եր առաջ վազել , վաթաթվել հարազատ վորդուն , բայց կիմոն միայն սասր դրսի տվեց ու նստեց թախտի ծայրին ... Մոր զրուխը թեքվեց ուսին կիսահատ ծառի ճյուղի նման , ձեռքից ընկառվ ավելը ու կրծքից թռագ խո՞ր հառաջ ...

Քիչ հետո մայրը վոտքերով գետինը քսաքսոցներով զնաց իրձիթի պահանջը և լուսիքամբ յերկու ձից ձվածեղ պատրաստեց : Կիմոն ձվածեղը կերավ , ցանկանում եր զուրս գնալ .

— Կա՞ց , վորդիս , զրից ոնհմ ասելու , — ցածը ու ձանիր տոնով խոսեց մայրը :

— Ասա ...

Պատափի նստեց թախտի ծայրին , վոտքերը դիմու անելով :

— Կիմո ջան , վորդի ջան . սկի գիտե՞ս , թե քնն եմ իդ որը հասցեր : Թիսի ձուռի ոլու միշտ թեքիս տակ ես մեծացել , — մոր ձայնը զողդուղում եւ մաշված գողնոցով սրբում աշքերն ու չորացած այտերից :

Կախված արցունքները , — յեկած վախող և ասում , թե ի՞նչ հալի յենք , ո՞ւմ պարագ սւնենք : Բա ի՞նչ ես ասում քո խղճին՝ ես բոռացածն ինչո՞վ տապրում : Խո չեմ ասում բարձած ուղտեր բեր , քի՞զ մատաղ ... Այս , — ու բարձրացրեց ծվեն-ծվեն դարձած շրջազգեստը , — արուսս կորել ա , տնից դուրս չեմ զւնում :

Յերկուսն ել չունենալու իրենց են քաշել : Խրձիթում լոռիթյուն ե : Կիմոն գլուխը կրծքից բարձրացրեց , աչքի տակով նայեց մորը , վոր լամոն եր կացնում : Սովորել , բարակել եր մոր գեմքը , սկսպում եր կաշին , ասես մեղրամոմ լիներ քսած :

— Ապրեն կոմսոմոլները , նրանց մաջեն ալինդ լինի . համ իրենց ոջախն են վաս պահում , համ չքափորին ու բախացնում : Մեր մի արան ել հնձեցին , ոկի իտրամո՞ր ես ...

— Տղերքն ասին ...

— «Ասին»... Համա զե ի՞նչ ... Յես ասում եմ ծուխը մեր ոջախից լինի , — չքերը նորից լցվում են արցունքով , ձայնը խեղդվում ե :

Կիմոն զզաց սրտի խորքում , վոր մայրն արպար և խոսում . գերջապես նա հարազատ մայր ե , իր հույսին ե թողած : Ու , ինչպես զատարանում մեղադրվող , դըլուխը քարչ արեց : Մաքուր ալիշլած զետնի վրայով նամահողի մրջյուն ե շարժվում : Յերեվի կերակրի յե զնում : Իսկ ո՞ւր գնա իր մայրը , ո՞ւր շարժվի : Ու հայցքը գանդաղ հոսում ե մրջյունի հետ :

— Գոնէ ենտեղ նոր ոջախ ծխեցնեյիր : Խաբարը բերում են , թե քու ի՞նչ թուք ու մոր ես ուսում զավուում : Լա՞վ գիտեմ քո բոշ տեղը , ա՞խ ...

— ՔԵԿ խարե՛ւ են մեր տղերքը, — անվասահ առաջ-  
իեց կիմոն:

Գեռ լավում է մոր լացը: Նա ջրակալած աչքերի  
պղոտք հայացքով տեսավ, վոր մի սովեր գանդաղ  
շարժեց: Կիմոն եր, դուրս դնաց: Մի ծանրություն  
քարի նման ընկավ կիմոյի սրախ վրա, վոր կրծում եր  
նրան անկշում: Դրսում ասես ամեն ինչ խոռվել եր  
նրանից ու սիրտը մթնել գյուղի նեղ ու մութ ճանա-  
ռարների նման: Գնաց դեպի խրճիթ-ընթերցարան:  
Այստեղ խոնվել եյին կոմյերիտները, յերիտասարդնե-  
րը: Քիչ հետո բջիջի ժողովն սկսվեց: Դործարանի չեփ-  
րջիջի անդամը, — ոլլավկայի յեխի վարպետի ոգնա-  
կան Ծատինովը, — սկսեց աղջատված հայերնով զե-  
կուցել թջիջի աշխատանքների մասին: Զեկուցման առ-  
թիվ մի շարք հարցեր տրվեցին: Մեկը հարց տվեց: —  
Կործարանում կա՞ն կոմյերիտականներ, վորոնք աչքի  
յին ընկնում պղոգուլով, արտադրության բարձրացու-  
մը խանգարելով և այլն: Դեռ հարցին չեր պատասխա-  
նել Ծատինովը, վոր մեկը նստած տեղից արսով վեր  
կացավ, — ասես ինչ վոր կարեոր բան հանկարծ հեշ-  
ելով, — մարդկանց շարքերը ձեղքելով ու մի գանիսի  
վոտքերը արորելով՝ շտապ դուրս դնաց: Կիմոն եր:

Դուրսը լուսնյա՞կ, ձրդճրդան դիշեր եր: Իսկ ներ-  
սից, ժողովից, նախ ինչ վոր ձայն յեկավ, ասու նրա  
յետեվից լավեց ճայթող ծիծաղ:

— Զլինի՞ թե շան վորդի Ծատինովն ինձ բամբա-  
սեց: Սատանի պես վո՞նց ել հենց եսոր յեկավ, — մըտ-  
քըսաց կիմոն: — Բայց դե ո՞վ դիտի, զուցե ուրիշ բանի  
համար ծիծաղեցին:

ՅԵՐԿՆՔՈՒՄ լուսինը սահօւմ և սխուր և Կիմոն նա-  
յում և անհանդիսաւ...

Կիմոն վերադարձավ տուն: Ներս մտնելիս գլուխը  
դիպավ ցածրիկ գոան փայտին: Պատկեց քնելու, բայց  
քունը չի տանում:

...Առաջ, յեր գյուղումն եյի, — մտածում և Կի-  
մոն, — ելի հազար ու մի ցավ ունեցի: Հայ հողն եր վա-  
րելու, արտօը հնձելու, կալսելու, հայ ձորում արդին  
եր ջրելու, անտառից փայտ պետք երերեցի... Գործա-  
րանում ել բաներն ուրիշ տեսակ են: Ենոտեղ գու քո  
գլխի տերը չես: «Ինչո՞ւ տասը բոպե գործից ուշացար,  
ինչո՞ւ աշխատանքը ժամանակին չես կատարել, ե՞ս չես  
արել, ե՞ն չես արել»... Շոդ որերին ել արհեստանոցում  
վոնց վոր կրա՞կ լինի վառած: Տոթն ու արեվը զրափց,  
ըուրաները ներսից քրտի՞նք և, վոր քամում են մինչե  
պճեղներդ»: Ու գեռ մտածում և կիմոն:

Դրսում չունը գայլահաջ տվեց, հետո կլանչեց...  
կիմոն շարժվեց տեղում.

— Այստե՞ղ ե լավ, թե՞ ոյնտեղ...  
Դադարեց մաքերի որորը: Բունը հաղթեց, իջոն  
կոպերը և հարցը մնաց անշատասխան:

ՀԱՐՑԵՐԸ ԼՈՒԾՈՒՄ են ՊԱՀԱՆՁՈՒՄ

Նո... հանրակացարանի գուռը թիկ-թիկացրեն:

— Ո՞վ ե, — ներսից ձայնեց հանրակացարանի  
ընակիներից մեկը:

— Յես եմ, Սերգոն: Բայց արա դուռը:

Դուռը բացվում և, Սերգոն ներս և մտնում:

— Դեռ քնա՞ծ ե կիմոն:

— Ես ել վո՞նց...

— Վեր կաց այլ ազա, չուտավ սուրիշը կեսին, —  
ու Սերգոն կամաց քաշում եւ վերմակից.

— Բ' ը՛լ՝ — ծըրում ե կիմոն, ու մյուս կողի վրա  
չուռ գալով, զլուխն ալմէլի և խոր թաղում վերմակի  
առակ: Այս անդամ Սերգոն ուղղակի ճրեց մի բանի ան-  
դամ:

— Վեր կաց, ամիր ուշանում ես գրծից:

— Դո՞ւ յես Սերգո՛ւ՝ և աչքերը տրորեց:

— Հա՛, յես եմ. չուտ վեր կաց: Ես վո՞նց ա...  
դու ելի քոնն ես շարունակում:

Յերեկոները դատարկ ման ես գալի, այդիներում  
մոշահավ իրանեցնում: Յերը ժողով, կամ ուրիշ  
զործ չի լինում, չուտ քնիր, վոր առավոտները վազ  
դարձնես:

Հինգ բոլեցից. Հետո նրանք քարքարոս արահե-  
տով ցած իջան: Ամառն իր փեշերը կամաց քաշնէ եր  
ձորերից, և արեն ել կրակի խուրձեր չեր թափում  
պղնձի սարերի, արդիների ու զործարանի վրա:

Մի քանի բանվոր ելին յեկել — ուղիւցից բավական  
ժամանակ կար:

Ալեքսանը կիմոյին նայելիս հոնքերը վեր քոչեց  
և մրմնջաց Մուկուչի ականջին.

— Ես վո՞նց ա, վոր հոսր չուտ ա յեկել:

— Հալլաթ կամաց զբանվում ա:

— Տեսնենք. ո՞վ չի ուղինաւ: Խելքդ զրանից ի՞նչ  
ու կտրում, Գարու:

— Այս փախքոսից բան չի դուրս գալ, — պատաս-  
խանեց աչքը չի Գարոն: Մուկուչը խայթող հայացք  
ձկեց Գարոյին: — Տո՞ւ, երեղվա ինակելիքենտ, վաղուց  
ա, վոր կաչիր փոխել ես, տեղը վոր զալիս ա, որտ-

նրա վրա հարձակվում ես վագնու նման ու փշերդ ես  
ցույց տալիս:

— Յես վրաւս չունեմ քեզ հետ խոսելու:

— Դե՛ իհարթիկ, զու ինտելիգենս, իսկ յե՞ւ րան-  
վոր: Յերեվի մտածում ես, թե ես «Հիմար» բանվորներն  
ինչպի՞ս են համարձակվել «Գարեգինը» գարձնել «աշ-  
քը չի Գարո»: Ինձ ել չառախոս են առում: Բահենց են  
բանվորները, սիրելիս, պարզ ու հասարակ: Գու յել ես  
բանվոր, բայց թե ինչպիսի՞ բանվոր, հարցը հենց դա  
յա... Ե՛ւ, «առցիւլտկան ծագում», անտե՛ր մնաս...

Գործարկումի նախազահը «Հայտարարություն»  
փակցրեց արհեստանոցի վռաներ.

— Տղերք ջան, ձեզ զայիմ պահեք հա՛, թե չե զի-  
տեք ելի, մեր վորոշումը՝ վորոշում ա, քարն յերկու  
կտոր կանի:

Չորս կողմից բանվորներն ու վարպետները զլուխ-  
ները ձգեցին և սկսեցին կարգավ.

«Ով վոր զուգոկից Ֆօ բոսկ ուշանա՝ իրեն իրա-  
վունք չպիտի համարի զործի անցնել մինչև շաբաշը.  
Ժամի 10 ը: Մին ել ես, վոր յերեք անդամ անհարգելի  
պատճառով ուշացողի հարցը, առանց դեռ ու զենի,  
զրիելու յու այսադրական խորհրդակցությունում:  
Չոշիստած ժամերի համար ժալով չի արվելու իւկ վո-  
րոնք համախակի ուշ զործի զան, զործարկումն ու վար-  
չությունն իրավունք ունեն նմաններին հանել աշխա-  
տանքից»:

«Հայտարարությունը կարգում են շատախոս Մու-  
կուչը, Ալեքսանը, բրոնիս Սրապիոնը, աչքը չի Գարոն  
և պլավկայի ցեխի վարպետներն ու բանվորները: Մի  
քանիսը կուշտ-կուշտ ծիծաղում են,

— Համար լազաթով վորոշում առ հա՛մ՝ . . . Տո՛ւ, վազուց պաի ես վորոշումը ըլեր : Ասկո՞ւ վործարկում : Այսինքն սոցմբումը գլուխ կդա՛մ :

Ծերուկ Միտն փակցրած սպիտակ «թղթին» և նայում : Իե՛ղձ Միտն, — ուսին խփեց Մուկուչը, — ահարագետ ես, չես իմանում հա՛մ կարգաւ, վեզդ ծուռ նայում ես :

— Ե՛հ, ի՞նչ անեմ, հիմի դարը ձերն առ, դուք եք «Հաշվի» մեջ . . .

— Ելի՞ դու քո «Հաշվի» մեջ բերիր :

— Բնկերներ, լսեցեք, — դարսած յերկաթների վրա բարձրացավ բրանիա Արագիոնը, — ով համաձայն առ, վոր եղ «Հայոտարարությունից» մի հատ ել Կիմոյի ճակատին կպցնենք, թող մատ բարձրացնի :

Մի քանիսը լիբաթոք ծիծագեցին, իսկ Սերգոն ու Վահոն նախատեցին :

— Զե՞նդ կորի և բերանիդ չափը ճանաչիր . . .

— Դա անվայել առ կոմյերիտին, պիտք առ հալածե՞նք նրան, ինչ առ, — աչքերը խեթեց Սերգոն :

Այդ որն աշխատանքն արհեստանոցում լիթանում եր, ինչպես միշտ : Լովում եր աղերանց կարճ և աշխուժ զրոյցներն ու սրախոսությունները : Իսկ Կիմոյի դեմքի վրա, մի տիրություն եր նստել, թեև ամեն որլիա ովես դիմարկն ելի թեք ու ծուռ եր ծածկել և կոճակներն արձակած բլուզի տակից յերեւում եր կեղտուա շապիկի վիզը : Մար հեկեկանքը, արտասուքը, չըբացած այտերը, պատկերի նման միշտ յերեվում ելին աչքերի առաջ և պատասխան պահանջում իրեն հարցերին :

...Ահա մայրը, բարձրացնում է ծվեն-ծվեն դարձած

շրջապահատը, լացով գանգատովում ե, — անսիրտ, անսրի, զու ինձ հսմար զավակ չծնվեցիր . . .

— Հապա այսորդա «Հայտարարությունը» — սթափ վեց Կիմոն, — ա՛յ, թե վորտեղ ե տնաքանդությունը : Չե՛, Կիմոն, կամ գյուղի ճամբեն պիտի բոնես, կամ նամաւում աշխատես : Բայց Կիմոն ի՞նչ յերեսով զյուղ զնա, նայի ու խսու մոր հետ, ընկերների հետ : Կիմոննան, թե ինչու յե գյուղ վերադարձել, այն ժամանակ կծիծագեն, կթքեն յերեսին :

Գանգուր մաղերով մինչեւ կեսը ծածկված ճակատին չարվեցին կնձիռներ : Հարցերը սուր մեխի որես ցցվել են Կիմոյի մտքում և լուծում են պահանջում :

— Քնում ես, այ՛ աղա, — հանկարծ ձեռքն ուսին զրեց վարպետ Վանոն :

Կիմոն սթափվեց :

— Յես . . . յես . . . չե ընկեր Վանո . . . աշխատում եմ . . .

— Հու, դե լավ աշխատի . . .

### ԲՅՈՒՐՈՆ «ԿԱՐՄԻՐ ՊՈՅԻՆՉ» Ե ԶՈՒԵՐՈՒՄ

Պղինձ հալող յերեք կոնվերտը ահեղ բառաշում են : Վարպետներն աշխատում են լրակի լիզուների առաջ և զեկավարում վարդագույն, հարվագ պղինձը : Նրանք միմյանց ողնում են լուս, խոսում հատու հայոցքներով :

Վարպետ Սրապը կոչտացած ձեռքի ձողը կոնվերտի ներսն ե մեկնում : Պղնձի թեժ բացը խոր շանթում ե գեմքը և առատ քրտինք քամում : Նա յետ է կանգնում լուս, շրթունքները ողմած, քրտինքը չթափելու բերանը : Կարմիր զանգվածը յեռում, զալարվում ե ներսը և ուզում է ուժով ջարդել կոնվերտի հողերը : Վարպետ Սրա-

րը նայում ե յեռացող, կաս-կարմիր կտրած ողջնձին:  
Բոցավառվում են աչքերը և լնդունում վառվող պղնձի  
փայլը... Քանի՞ոն են իրենց ուժը միացրել պղնձի ու-  
ժին... ի՞նքն ել իր ուժը կծուլի նրան... թող յերկաթու-  
ղին պղնձի բեռներով գնա, մտնի իր յերկը բոլոր յե-  
րակները... թող ամեն տեղ լավի պղնձի զրնղան ձայնը:  
Զգացվի՞ նրա ուժը: Յեվո՞վ չի իմանալ, վոր այդ մար-  
դու, բանվոր մարդու ուժն ե, նրա ձայնն ե կղնդու՞...

Նորից յերեք ձողեր շեշտակի մեկնվեցին. յերեք կո՞ն-  
վերտիք ներսը և սկսեցին զեկավարել բորբոքվող զան-  
գածը: Դեմքեւը վառվում են և ծածկվում քրտինքի ու-  
ղի կաթիլներով:

Քրտնած մարմիններն ելի առաջ են մզկում, ձո-  
ղերը մեկնվում են և քրտինքը հոսում ե...

Կարմիր պղինձ են ձուլում:

\*\*\*

Մուխը կամաց ծվարում ե ձորում և նրա ծոցում  
կորչում են այգիները, ծուխը, քարայրերը, պղնձի սա-  
րերը, և ամեն ինչ... Միայն լովում ե յերեք կոնվերտիք  
տէնեղ բառաչը: Յերբեմն այդ բառաչին են խառնվում  
սրբնթաց գնացքների աղմուկն ու սուլոցը և չունչ և առ-  
նում ձորը, արձագանքում են այրերը:

\*\*\*

Հանբակացարաններից մի փոքր գենը, քարքարու-  
թուան լանջին, բան-ակումբն ե հաղթանիստ չենքով:  
Կոմսոմոլիք բյուրոյի ժողով ե: Մի շարք հարցեր են  
զրվոծ քննության:

— Գիտեք, վոր սոց-մրցան ենք անցել, — հար-  
ցով սկսեց բջիջի քարտուղարը, — համա զե եղ մըս-

մը ձեր չի հասնիլ, յերբ մեր կոմյյերիոններից մի քանի-  
ուը լուծը դրսի վրա յեն ձգում:

— Կոնկրետ, — ձայնեց մեկը:

— Այս կոնկրետ, ում հարցը դրված ա, խնդրում  
ենք նրա մասին ել խոսես:

— Ավասե՞ք, ընկերներ, յև կոնկրետ եմ խոսում:  
Պետք ե հարցը մի քիչ հիմնավորե՞լ թե չե: Երանք,  
վորոնք գյուղից են յեկել, զեռ լավ չեն զգում. վոր ար-  
տադրության մեջ վորակ և ավելի շատ ճշտապահու-  
թյուն ու գիսցիպլինա յե հարկավոր:

— Պար հուպ տանք զլանց, գրասե՞նք կոչտ ու կո-  
պիտ տեղերը:

— Պար հուպ տանք, բա՛...

— Սիսր առանց ձայնի մի խոսեք: Որակարգի այս  
հարցում առաջին հերթին քննում ենք ընկեր կիմո պե-  
պանյանի հարցը: Ով վոր նրա հետ միենաւյն ցեխում ե  
այստառում, թող խոսի:

Բրոնիա Սրապիսնը կիմոյին նայելով, սկսեց խո-  
սել, թե ինչպես նա կոպիտ և վարվում վարպետի և ըն-  
կերների հետ, շարունակ ուշ և աշխատանքի զալիս,  
Հանձնարարած զործն որերով ձգձգում ե և այլն:

Իսկ յերբ տոկար Սերգոն եր «հուպ տալիս» կիմո-  
յին, մի քանիսը կատակով նկատեցին:

— Դու յե՞լ... ախր զու նրա ինամակալն ես:

Կիմոն պառչները կրծոտելով նայում եր Սերգոյին...  
Զի՞ ամաչում, վո՞նց ա խոսում: Բա ասում ա, թե իմ  
մասին մտածում ա...

Խոսում ե Մուկուչը:

— Կիմոն բնդունակ տղա յա, համա ու չքը զործու-  
մը չի, նեղություն չի կրում սովորի, վորակորովի:

ՅԵԿԵՐ ԵԽ անգամ կիմոյին զգուշացում անենք և նրա ու  
մի քանի ընկերների դործի չուրջ սպիտ-դատ կազմա-  
կերունք : Դա ամենալավ դասը կլինի նրանց :

— Ճիշտ ա ասում Մուկուչը, արդպես ել վորոշենք :

Կիմոն կանգնել եր բյուղոյի սեղանի առաջ և լուս-  
ուում եր այդ բոլորը : Իրեն վատ եր զգում, սիրոն ան-  
հանգստանում եր, յերբ լսում եր իր անունը :

Այդպիսի բոպեներին նա ձեռքը շտապով հասցնում  
եր բուղի փեշերին, ուզգում կամ գլխարկն առաջ քո-  
չում :

— Յես ասում եմ դուքս անենք կոմսոմոլից, ու ելի  
դուդ քենք, — նկատեց մեկը :

— Այո՛, դուքս անենք, — տեղից վեր թուավ աշքը շիլ  
Քարսին, բունցքը խիելով սեղանին, — նա մանր բուռ-  
ժուական միջավայրի ելեմենտ է, դժվար է նրան ուզդել  
մենք ժամանակ ենք կորցնում :

— Վո՞չ, ընկերներ — զայրացավ Մուկուչը — վա ի՞նչ  
առկտիկա յե, այո՛, զյուղից ենք բերելու մեր կագրերը.  
ուրիշ վո՞րտեղից : Մենք պարտավոր ենք և մեր պա-  
հանչն ե, զբաղվել նրանցով, նրանց դաստիարակու-  
թյան գործով : Նույնիսկ յերկար, յեթե կարիք կա-  
մենք պետք ա կիմեյին վերափոխենք դարձենք իս-  
կական բանվոր :

— Կեցցե՞ս Մուկուչ, զուր չես կուրսեր գնացել, սկս  
յետարիատի իդիոլո՞գ ես դառել, Հա՛, Հա՛, Հա՛, — Հոր  
Հոաց Գարոն :

— Զենդ, իբր, — պսոաց Մուկուչը, — կիմոն  
ծույլ ա, իսկ դո՞ւ... Դու ել ժողովները թողած աղիք  
ներում, թփերի տակ, մաշինիստկաների փեշերի տակն  
եռ մտնում, նրանց յերեսը լիզում :

— Այդ քո՞րծը չե, մհծամիտ, ստախոս :

— Իսկ զու՝ կնամուլ, չկուրնիկ :

Այստեղ ձեր հարցը չենք քննում լսեցե՞ք, — միջա-  
մտում ե շրջկոմի քարտուղարը, լսեցնում նրանց և սկը-  
սում ե խոսել, թե ինչպես յերիտ բանվորը պետք է ո-  
րինակելի լինի իր աշխատանքով, վերաբերմունքով, ու  
կենցաղով... Դատապարտում ե կիմոյին, զոր մի քանի  
ամիս առաջ իրեն սիամ տեղեկությաններ և հաղորդել  
արհեստանոցի վիճակի մասին, իբր թե այստեղ կոմյե-  
րիտականներին և առանձնապես իրեն, հալածում ե վար-  
պետ Վանոն :

Կիմոն սիրթնուծ նայում ե քարտուղարին ու մտո-  
ւում սեասըտած...

— Սա յել, զոր հսկես ա մտածում, յես կարած եմ :

— Այժմ, — չարունակում ե քարտուղարը, — ինձ հա-  
մար պարզ ե ամբողջ զբությունը : Բայց պետք ե մի քա-  
նի ընկերների զգուշացնել, զոր հաճախ ծաղրել, արհա-  
մարհել են կիմոյին : Նա պետք ե մնա մեր չարքերում :  
Զե՞ զոր չոհարն ել մաքուր չի լինում, բայց կոնյերարի  
թիե բոցերում վատվում, հալվում և տրանջալով և վեր  
ջում ստացվում է մաքուր պղինձ : Միայն թե պետք ե  
աշխատենք կիմոներից անպատճառ և շուտ ստանալ ոյզ  
«մաքուր պղինձը» : Գիտե՞ք ընկերներ, — զուք, — բյուրո՞ն  
ու ակտիվը, — այն վարակետներն եք, զոր զեկավառում  
եք վառվող կոնվերտը — բջիջը, յերիտասարդությունը,  
և զուք, յեթե ճիշտ չիմանաք ձեր գործը, «կարմիր  
պղինձ» չեք ստանալ :

Կիմոն սիրտ առավ — կուրծքը բարձրացավ աղաս  
չնչելուց :

— Մի քանի կոմյերիտ ասում են, — խոսում ե բջիջի  
քարտուղարը, — զոր կիմոն ծեր մորը չի ողնում : Բայց

Ժիայն Կիմոն չե այլպես : Բանկոռովի հաշարանի գինին  
շտուերին եր հասցրել եղութիւն : Արդեն մի շարաթ ու  
վար արգելված ե գինու վաճառքը :

Կիմոն լուսու, Հանդարսունայում և խոսովներին և  
ժաման կուլ տալով լուսունանց : Ճակատին ցողի ովեա  
բարակ քրատինք եր գոյացել որբեց կոշտ ձեռքի ափով :  
Տղերքը նայում, հասկանում են նրան և բարեկամու-  
րար ժպտում . . . Վո՞նց ե լուել և ձայն չի հանում : Հասու-  
ինչո՞ւ, աշխատանքի ժամանակ ել այլպես «Համեստ»  
շեն լինում : Այս, թե վոնց «կարմիր պղինձ» կոտենք բե-  
զանից :

Բյուրոն Մուկուչի յերկու առաջարկն ընդունեց վո-  
րոշում : Կիմոն ցանկացավ գուրս զնալ, բայց ժողովի  
նախագահն ասաց :

—Նայիր և լսիր, թե ինչպես անխնա յենք նաև զե-  
զի մյուսները :

Պատուհանը բացեցին . աշնանային զով ողը ներս  
խռուժեց . ծուխը չեր չոքել բնակարանների, այդիների ու  
ձորերում խաչաձեռղ ճամապարհների վրա, . այլ ողի-  
տակ, բամբակե սյունի պես ճպվում, բարձրանում եր  
վե՛ր, դեսի վե՛ր և այսեղ լուծվում կապույտում . . .

Սուլիչը ճաց — զործի եր կանչում յերեկոյան հեր-  
թի աշխատողներին : Սուլիչի հնչյունների ալիքները  
լուսնի լուսի տակ փոփում, տարածվում են արաերի ու  
ընտաների վրայում օրինչն էնունները, մինչև սարեցի  
կատարները .

Պատուհանով լսվում ենաև յերեք կոնվերտի աշեղ  
րառաչը : Այստեղ վարպետները խուսր ակնոցներ, կազին  
պինջակներ ու գոգնոցներ հազած, կրակե լեզուների ա-  
ռաջ բրտնաթոր ու վառվող դեմքերով, դեկավարում են  
այրվող ջոհարը :

Կարմիր՝ պղինձ են ձուլում :

Ներսում բյուրոն սկսեց իր աշխատանքները . Հետո  
յել կիմոյի փոխարեն ուրիշները կանգնեցին բյուրոյի  
սեղանի առաջ և քրտնած ու կարմրած յերեսով դուրս  
յեկան ժողովի սենյակից :

Բյուրոն «կարմիր պղինձ» եր ձուլում :

### ՅԵՐԲ ՔՐՑԻՆՔՆ ԵՐ ՔԱՄՎՈՒԽՄ

Բանվորական ակումբում ագիտողատ եր լինելու :

Դատն սկսվեց բոլոր ձեականություններով : Բեմ  
կանչվեցին կիմոն և ուրիշ յերիտասարդ ու հասակավոր  
բանվորներ : Կարդացվեց մեղագրական արձանագրու-  
թյունը :

Յերկար ժամանակ դատելուց հետո եր միայն, վոր  
կիմոն լիասիրս նայեց զահլիճի կողմը : Յերնեթերան  
լիքն եր զահլիճը : Բոլոր բանվորները, բոլոր ծառայող-  
ները, նույնիսկ նրանց կանայք այնտեղ եյին : Այս, նր-  
անցից մեկը ժպտոց, մյուսը քրքնաց, Հովհանք գեմ-  
քը, յերբ քիչ առաջ ինքն եր խոսում : Հիմա բոլորը իրեն  
մասին վատ կարծիք կը կազմեն : Ո՞վ զիտե, զույց հենց  
վազը գործարկումն ասի .

—Խնդրում ենք սպեց հագուստագ հանես, հետո զան-  
ձապահի մոտ «բառչոտ» արա, ու գնա ձեր տունը :

Մաքերի հետ կոփկ եր անում կիմոն, յեր նսիա-  
չը խոսեց զանդահարելով :

—Ձեզ հետ եմ, ընկեր, չե՞ք լսում :

Խոսում եր կիմոյենց վյուղացի մի յերկոտ բանվոր  
վոր աշխատում եր «բազնի» ցեխում :

—Ես ել են եմ ասելու, վոր ընկեր կիմոն դյուլում  
մի քանի անգամ գունչ ու պուռնջո ջարդել ա :

—Այս, շատ ել լավ ե արե՛լ . . .

— Տեղդ նոտիր, — ձայն խնդրելով խոսեց մի կօմ-  
յերիս, — յես շատ լավ գիտեմ եղ մասին, մեղալորը  
դու եյթը. անձնական հաշիվներ ես քրքրում, ամո՛թ ո-  
ւոած են քաշում ծերուկ Մխոյին, վոր խոսի:

— Դե յես ել ի՞նչ ասեմ, ջահել տղերք եք, խոսքն ել ա-  
ճե՛քը, գիրն ել: Ամեն բանի հաշիվը դուք եք իմանում:  
Ծերերս մարդամեջ չենք:

— Կիմոյից խոսա, — զանդահարում է նախագահը:

— Հա՛, կիմոն. տղա յա ե՛լի... Արևը ե՛, մի մար-  
դաբոյ բարձրացած է մինում, վոր անլիվ յերեսով գոր-  
ծի յա դալիս: Մի վարպետն ել յես եմ, աշխատում եմ  
գիտեցածս սովորեցնեմ մեր ջահելներին. համա կիմոն՝  
հե՛չ. տեղից չի շարժվում: Ե՛հ, ասել եմ, ելի կասեմ,  
վոր նրանից մենք հույս չունենք:

Ելի յեն խոսում են վարպետ Ալեքսանը,  
յերենց ցեխի վարիչ Վանոն, աշքը չել գարոն և մյուս  
ցեխիրի բանվորներից: Խոսում են սոց-մրցումից,  
արտադրության բարձրացումից, յերիս. վորակավո-  
րումից և այդ բոլորը բերում, կապում կիմոյի հետ,  
զանազան բառերով ամոթահար անում նրան:

Քրտինքը պատել է կիմոյի ճակատը: Անհանդիսա-  
կամ, չուտ-չուտ ձեռքերը դրպաններն ե չուլալում, կամ  
գլխարկը դրսառում... Տղերքը խոսում են բարկացիկա,  
գլխարկը դրսառում... Տղերքը խոսում են բարկացիկա,  
ձեռքները ձոճելով ողում: Առես ամեն մի խոսողի հա-  
յացք ասելների պես ծակում ե աչքերը և ուղեղում  
ցնցում առաջացնում: Խոսողները կիմոյին ինչքա՞ն  
խիստ և անզիջող են թվում: Մեկը խոսում է ձեռքերը  
թափահարելով և ասես ձեռքի այդ ամեն մի շարժու-  
մը, յերկաթե հարվածի պես ծանր թափով իջնում է  
վզին և գլուխը քարշ անելով, նորից լուս դահլիճից  
յեկող հարվածները:

Ահա պատից կախված լենինի մեծադիր նկարը:  
Նայում ե իրեն... Նայում ե քաղցր ժպիտով և սուր հա-  
յացքով: Յերբ բարկանում են դահլիճում, ասես նա յել  
և բարկանում, յերբ մեղմանում են, ասես նա յել և մեղ-  
մանում:

Լավ չի հիշում կիմոն, թե ո՞վ եր խոսում և ի՞նչ եր  
տառում, յերբ նախագահի ձայնը զննաց.

— Բնկեր կիմոն, ազատ եք...

Ռումբի պես զուրս թուավ դահլիճից: Քրտինքը  
ծորում եր կարմրած յերեսից, ասես վառվող հնոցից  
դուրս յեկավ: Զապած չնչառությանը դրսում աղատու-  
թյուն ավելց: Պինջակի թեռվ սրբեց ճակատի քրտինքը.  
Թվաց, թե քրտինքի հետ սրբեց մի հին կուտակված  
ժայռձ...

Խոսեցավ Սերգոն, ուզում եր խոսել:

— Ել չիսոսես Սերգո ջան, — ու հեծկլտալով զրկեց  
նրան, — յես իմն ստաց: Տեսա՞ր: Հազարի թուր  
ու նախատինք կերա. ել ո՞վ մնաց, վոր չխոսեր, ծի-  
ծաղով ու հպարտությամբ չնայեր վրաս: Գիշեր-ցերեկ  
կանեմ... Չե՛մ թողնի, վոր սրանից հետո ինձ վրա ու-  
րիշ աչքով նայեն: Չե՛մ, թողնի, չե՛... Բեմում վա-  
գում եյի... Վոնց վոր թե չորերս նեղում, կրակում  
փոթոթում եյին ինձ:

— Ա՛յ, թե վոնց կիոխվես սիրելիս, հիմու ձեռք-  
ձեռքի տված կզաս բոլորիս հետ և նրանք, ի հարկե,  
քեզ կսիրեն, — Սերգոն ձեռքը խփեց կիմոյի ուսին: Ու-  
րախությունից թեկեր առավ, խորապես հավատաց, վոր  
ընկերոջ մեջ մեծ բեկում է կատարվում: Այդ պահին  
նա զգում, ճանաչում եր իրեն այդ եր կարենորը:

Կիմոն աշխուժ քայլերով բարձրացավ դեպի հան-

բակացարան։ Յերբ դուռը բացեց, ներսը վոչ վոք չը-  
կար։ Փատաց, բոլորը դատի յին գնացել։ Կիմոն ան-  
սովոր, յերբեք չապրած թարմություն ու յեռանդի վա-  
րար հոսանք զգաց մարմնի մեջ։ Սիրան ուռչում, բարձ-  
րանում ե, մարմինը ըռնվում մի քաղցր հուղումով։  
Ասես թե վողջ ձորը, հեռու դաշտերը և անդամ կա-  
պույտ յերկինքը, լցվել են ինչ վոր քաղցրությամբ և  
իր սիրալ ձուլվել ե նրանց լայնության հետ։ Խվում ե,  
թե յերակներով հալած պղնձի արյուն և հոսում։ Նոր  
արյուն, նո՞ր կորով։ Յերբեք այդպես ուրախ սրտով ու  
վար հուշերով ցած չե դիտել այդ բարձրությունից։  
Գետը քածրում վոլորվում, Փշացնում ե փորսոյ ոճի  
ովես։ Իսկ լուսնի ցուլքերը շողջողում են գետի լայն  
հայելու մեջ։ Գործարանի տասնյակ մեքենաները կան-  
չում, համելսում են ժիւլար։ Եղանք պատվում են ուժ-  
գին և որն-որին բարդանում ե նրանց պտույտը։ Այդ  
ժամանակ ի՞նչ անուշ էր թվում ներքելից յեկող մեքե-  
նաների ու հալվող պղնձի յերգն ու մանչունը։ Ինչո՞ւ  
ինչո՞ւ, միշե այդ չեր լսել, չեր զգացել նրանց ուժը,  
կարտոն ու քաղցրությունը։

Կիմոն ուռում ե թոչել մեքենաների մոտ, յուզել,  
մի պահ փարզել նրանց սառ մարմինը։ Հավատացած ե,  
վստահ և իր ամբողջ զիւով, վոր հենց այդ նույն բոպե-  
յին, կամ մի քանի որում, հառաւ կոսովորի, կփարժի  
նրանց լեզվին։ Այն ժամանակ ստանուներն ել կդողուն  
ձեռքին, իսկ ընկերները կասեն թիկունքին խիելով։

— Սա՛ղու կիմոն։ Հալալա քո կերած կաթը։ Ա՛յ, հի-  
մա ինչ կասե՞նք... Մեր աշքի լուսն ես, մեք սիրելին։  
Պատկերացնում ե կիմոն, թե այնուհետև ինչպես  
ուշադիր ու յեռանդով ե աշխատելու և սիրտն ու յե-  
րակներն ամելի ուժգին են գործում, վողջ եյությամբ

լցվում ե վաղվա ձգտումներով։ Ասես մեքենաները  
ցածրից կանչում, համերգում են միալար։ Յեղ կիմոն  
այդ հեքիաթային, բայց կլանող, մագնիտացնող ձայ-  
ներն առաջին անգամ ե ունկնդրում սրտի նուրբը թելե-  
րով, վոր այնպես ներդաշնակվում են ներսից, մարմնի  
բոլոր մասերից լսվող նոր ձայների ու յերգերի հետ։

Կիմոն իջակ ցած, գեղի գործարան։

Յերեկոյան մթի միջով ավելի պարզ ու ուժգին և  
լսվում յերեք կոնվերտորի միախառնված մոնչյունը։  
Ավելի՛ բարախեց սիրտը, ուր մի կարուտ եր ծլում...  
Կարո՞ւ գեղի կյանքը, գեղի աշխանքի պայքարը։  
...թող գա՛ վաղը, առաջին արշալուսոտ վաղը...»

ՀԱՅԱՅՔԻՆԵՐՆ ՈՎԱԿԱԼՈՒՄ ԵՆ

Ամիսներ են անցնում։

Բանվորները խոնվել են գործարկոմի գրասենյակի  
առաջ և սոց-մրցման «տախտակն» են կարդում։ Կիմոն  
մի շարք կետերով սոց-մրցման ե հրավիրել Պլավկայի  
ցեխի յերիտրանվորներին։ Հետեւ կանգնածները բարձ  
րացել են վոտների պձեղների վրա և վիզները ձգել...  
նրանք ինելով պձեղների վրայից, ասում են։

— Մալաղեց կիմոն... իսկ շատերը զարմանում են  
և ուսերը բարձրացնելով հեռանում։

Կիմոն հեռվից գալիս ե. նկատեց, վոր «տախտակն»  
են կարդում։

Մտքերը սահեցին, թուան գեղի մեկ-յերկու տարի  
յետ... Են ժամանակ ուրիշ կիմոն եր, իսկ ա՞յժմ։  
Ժամանակահանում չիտիեց այն որվա պես և քայլում ե հա-  
մարձակ, գլխարկը մի փոքր յետ դրած—դեպի ծոծրա-  
կը։

Գնում ե շվեվացնելով։



Ամեն առավոտ, հենց վոր լույսը աղոտ աչքերով  
նայում ե հանրակացարանի լուսամուտից, կիմոն վեր ե  
թռչում տեղից և ամենից առաջ հագնվում: Ինչու,  
միշտ զարթնելիս և շտապ հանդնվելիս հիշում ե բյուրո-  
յի ժողովը, ազիտ-դատը և ընկերների սուր հայացքնե-  
րը: «Ե՛հ... ինչե՞ր ե կապված այդ մի քանի որդա-  
հետ»:

Յերբ գնում, արհեստանոց ե մտնում, ամեն կող-  
մից աշխուժող «բարի լույս» են կանչում, կամ հենց  
հեռվից, ստանոկների ու փոկերի արանքից ձեռքերը  
թաշկինակի նման թափահարում.

— Բարի լույս, կիմու...

Մուկուչի աչքերը կիմոյին տեսնելիս ժալտում, փայ-  
լում են վարվող պղնձի նման և փոքրանում:

— Հիմա ազիզ, պլուլետար ախպերս ես... Կերածդ  
վերջը հալալ արիր...

Իսկ վարպետ Վանոն, յերբ տեսնում ե, վոր վոչ  
վոք արհեստանոցից չի բացակայում, ուրախանում, վո-  
գեռովում ե... Մոտենում ե կիմոյին և նայում դոհու-  
նակությամբ:

— Ա՛յ, հիմա ինչ կասեմ. վաղուց պետք ե «գերեզ-  
ման դնելիր են անտեր «պրոգուլն» ու «բոշբողազու-  
թյունը»:

Յեվ վարպետն ու աշակերտը նայում են իրար, ժըպ-  
տում իրար, բարեկամի քաղցր հայացքով: Գրկում, մը  
տերմորեն ողակվում են նրանց հայացքները միմյանց,  
վոնց վոր ամուր շղթայի ողակներ: Իսկ յերբ կիմոն հի-  
շում ե իրեն շրջկում՝ քարտուղարի հետ վարպետի  
մասին խոսելիս, ամաչում ե և այտերի ծայրերը կարմը-  
րուած են ճորուած գեղձերի նման:

\* \* \*

Կոմյերիտական Յ-րդ բրիդագի անդամներն հավաք-  
վում են:

Բրիդագի ղեկավարությունը բյուրոն հանձնել է  
իիմոյին:

— Ընկերներ... Պակասավոր կողմեր շատ ունենք  
դործարանում.— Կիմոն այստեղ կանդ առավ, բլուզի  
փեշերը դրատեց, մտածեց.— Մենք հիմա հարվածային  
ենք. ել առաջվա պես չենք շարժվելու. Հիմա մի ուրիշ  
տեսակ յենք լինելու... Մենք պետք ա ստուգենք, քըր-  
քրենք ամեն ինչ... Պակասավոր, վնասակար բաները  
հանելու ենք քարի արանքից, թագում տեղից... Մեր  
դործը, աշխատանքն ամեն մի ցեխում հնենց պտի դնենք  
վոր մի կոոր ջոհարը, յերկաթը ինչ ա անտեղի շիրջի,  
չփշանա... Դուք ինձանից լավ զիտեք, վոր մեր դործու-  
րանը քանդված տան նման եք. Հիմա պատերն ամուր  
շարում, բարձրացնում ենք... Իսկ ով վոր ցեխը, քարի  
ու կիրը ուշ ա հասցնում նա մեր թշնամին ա: Մենք յեր  
կու ցեխում ստուգելու յենք բոլոր պակասավոր կողմե-  
րը... Շատերը խախտում են դիսցիլինը, գործի վրա  
քնում, սպեց հազուատը զյուղ թոցնում, նո՞ւ, պրոդու-  
անում, դործից ուշանում,— այստեղ հանկարծ հիշեց.  
պատկերացրեց, յերբ իրեն ամեն կողմից պրոդուլի «հե-  
րոս» եյին կոչում. մի պահ չփոթվեց, այլայլեց, բայց  
կրկին հավաքեց իրեն.— զե, ընկերներ յես ել եմ... եղ-  
պես յեղել, բայց հետո իմ ճամբեն ցույց տվիք, յես ինձ  
շկորցրի, յեկա բոլորիդ հետ...

Վարար հուզումը լցվում է կիմոյի սիրտն ու յերակ-  
ները, մի բան ասես խեղդում է կոկորդը, բայց ըստեն  
անցնում ե և հանկարծ, խոսելիս, բուռնցքված ձեռքը

լոփում սեղանին, —պատի հուապ տանք ընկերներ, ով  
պրոգուլա կատարում, տուժում ա արդյունաբերու-  
թյունը. հուապ տանք, ու թե կարանք, բերենք մեզ հառ-  
ցնենք...

Ծափահարեցին, ու հետո ել ուրիշները մի քանի  
խոսք ասեցին: Տոկար Սերգոն լցված աչքերով ու հմայ-  
ված զեռ նայում ե կիմոյրն. վորդեց զերդի նրան նույն  
իսկ ցանկանում ե համբուրել ճակատը, փարվել վզովը  
բայց ամաչեց ընկերներից.

—իմ թանկագին ընկեր, ել հետ չես դառնա, դու  
միշտ մեզ հետ ես...

Բրիգադը դուրս յեկավ սենյակից, շարժվեց գետի  
ցիւսերը: Քայլում ե կիմոն, վորպես յերբեք չեր քայլել.  
Դնում ե, վոնց վոր դործարանի գիրեկտորը լինի, վոնց  
վոր իրենց արտր լիննի հնձի գնալիս:

Մազերի խոպոպը կախվել ե ճակատին, իսկ կոզիրո.  
Կը՝ ելի ծուռ ու թեք ե:

Զննող հայացքով նայում ե չորս կողմ թափված ի-  
րերին, գործիքներին, ասես առաջին անգամն ե գնում  
այլ ճանապարհով, առաջին անգամն ե մտնում գործա-  
րան:

Առջնում մոնչում են կոնվերտըները և ծղրառում կոմ  
պրեսորները:

Բրիգադը գնում եր...

1929թ.

## ՅԵՐԿՈՒ ՏԱԽՏԱԿ

Ալեքսանն Ալլահվերդու բանվոր ե:  
Կածաններով զգույշ իջնում ե ցած, բանելով քարե-  
րից ու թիկերից:

Մտքերը հանդիսատ չեն տալիս նրան. վորդի պես  
կրծում են ուղեղը և ուշքը հեռվում, ուրիշների մոտ,  
վոտքը քարովն ե խփում կամ համփեն ծոռում:

Հիմա գնա ի՞նչ ասի, ի՞նչ պատճառ բերի, վոր ար-  
դարանա: Վո՛չ, մի պատճառ ել չեն ընդունի: Քանի տն-  
դամ գնաց ինդրեց, աղաչեց ցեխի վարիչ Պիլեին, վոր  
միայն յերկու որով իրեն բաց թողնի և հիմա ինքը մի  
շոբաթով ուշացել ե ֆհարկե չեն ների: Շատերի «սոսնց»  
հագուստն են նման պատճառներով: Հանել, ոռճիլի  
մնացորդը տվել ե ճամփա գցել իրենց գյուղը:

—ինչ անեն, հախտ ա, Ալեքսանն, —չնչոց ինքն ի-  
շեն:

Յեկ Ալեքսանն ասես վոչինչ չի տեսնում, վոչինչ չի  
լուս: Ասես առաջվա նման գետն ել չի հոսում վշշալով,  
չի թռչում քարերի գլխով... Դետի ջուրը պղտոր և թա-  
գում Ալեքսանին, իսկ յերկենքը՝ ուեակեած...

Տխուր և մտքերի հետ վիճելով գնում ե Ալեքսանը:



Մոտեցավ գործարանին: Քանվորներ են յերկուում  
հանրակացարանների դռներին, ճանապարհներին: Ա-  
լեքսանը խուսափում ե նրանց նայել, քարել: Ով ե ի-

մանում, գուցե՛ գիտեն, վոր ինքը մի շաբաթ գործի չի յեկել և ցեխում տղերքն եղ մասին շատ են խոսում։ Յերբ մոտեցավ ցեխին, Պելե՛ կանչեց մոտը, բարկացավ, հայհոյեց.

—Բա ելի ինչի՞ եյիք պայմանադիր ստորադրում, Հ՞ը։ Մին ել դու, հրեն ստորագրել ես, շան վորդի, ի՞նչ պատասխան ես տալու քո գործարանին, քո կառավարությանը, թե ի՞նչու յես պրոդուլ արել։

—Այս ընկեր Պիլմ, —աշխատում ե արդարանալ Ալեքսանը, —արտերը կծղել եյին, կարտոփը հասել, թը փերը դեղնել եյին, բա վո՞նց չմնայի, Հ՞ը… Յերեխեքը հաց են ուղում, ես ա ձմեռ ա դալի։

—Դե վոր ըտենց ա, թողեք գործարանը, դնացեք հողի վրա աշխատեցեք։ Մենակ հիմա չի. սակ տարին եք բահենց անում։

—Հընդեր Ալեքսան, ծաղրական և բարձր ձայնով խոսեց հին բանվորներից մեկը—մինչև յԵ՞րբ պտի դյուդի պոչը բռնեք, չեք ուզում մի կտոր հողից ձեռք քաշել, համա հոտեղ ել մեր գործը տուժում ա… Զեր յերեսիցն ա, վոր մեր ցեխը եսքան հետ մնաց։ Եղ չելավ, չե, կամ հողը, կամ դուքս բանը։

—Հնենց ել վոր, —վրա բերեցին յերկու յերիտասարդ բանվոր։ —կամ հողը կամ գործարանը։

—Դե գնա գործարկոմ, —խոսեց Պիլմ, —նո պիտի համաձայնվի, վոր գործի անցնես։

\*\*\*

Գործարկոմի նախագահը տեսնելով Ալեքսանին, գըրիչն ել չշարժեց սպիտակ թղթի վրա, հետ քաշեց ու անխոս, յերկար նայեց նրան։

—Դու ե՞լ ես ուշացել… Քանի՞ ո՞ր…

—Մի շաբաթ, ըմի չեր, պտի մնայի, արտերը կը զել, ցորենը թափում եր։

—Բա վոր բոլորդ որերով ու շաբաթներով կյուղ դնաք, —ձայնը բարձրացրեց նախագահը, —եստեղ ո՞վ աշխատի, իշխանության ո՞վ պատասխան տա, Հ՞ը… դե համար, —ու քաշում ե Ալեքսանի թեկից, —արի տես ինչ պրված «սոցմրժման տախտակում»։ կարդա, «ուրախացի»։

Վոտքերի թաթերի վրա բարձրացած և վիզը ձգած, կարգում ե Ալեքսանը և աչքերին չի հավատում։ Իրենց ցեխի, ճուլարանի բանվորների մի մասի (նաև իրեն) աղպանունները գրված են «սե տախտակին», վորպես պրո-գուլչէիների, իսկ արհեստանոցի ցեխը՝ Ընդհակառակը, փայլում ե «կարմիր տախտակին»։

Ալեքսանը կոտրած սրտով կարգում ե նաև «նրանց» մասին գրածը։

—Վո՞նց թե, —ասում ե մտքում և թեթև ցնցվում, —Ղաղարը, Թևանը, Կրիչան ու մեկեներն ի՞նչո՞վ են աղպել մեր տղերանցից։ չե՛, պեսք ա մեր ցեխն ել առաջ տանենք, հասցնենք նրանց, դլուխ բերենք պլանները։

—Աչքերդ խո չե՞ն ցավույ կարդալիս, —հանկարծ գործարկոմի նախագահը ձեռքը խփեց Ալեքսանի ուրին, —դե գնա և աշխատի, ես վերջին անդամն ըլի։

Ուրախացավ, թեեր առավ Ալեքսանը, ուզեց գրկել նախագահին, ասել, վոր ել գործը չի թողնի, բայց մի պահ չկարողացավ վոչինչ ասել։

—Մենք ել կհասցնենք, անողատճառ կհասցնենք Կլանները, —խոսեց Ալեքսանը և դնաց դեպի ցեխը։

Յերբ նա հետ նայեց, նախազահն ել չերեալ, դրա-  
սենյակ եր մտել: Պատից կախված փայլում ելին սև և  
կարմիր տախտակները:

—Ես մի հետը քեզ կրատ ըլի, Ալեքսան, վոր անու-  
նը ել ըլդրվի «սև տախտակին», —քթի տակ խոսեց  
ինքն իրեն և մտքում կարմիր ու սև տախտակը՝ շտա-  
պեց դեսպի ցելու...

1930թ.

## Ն Ա Դ Յ Ա

Նադյա՛...

իմ կոմսոմոլ, իմ հեռավոր լնկեր:

Թվում ե ինձ, վոր ահա, բացվեց սենյակիս դուռը,  
ներս վագեցիր քո ժպացող ոռուսական կապույտ ոչքե-  
րով ու զբնդան ծիծաղով և սենյակս լցվեց մի  
քաղցր ու թովիչ բովանդակությամբ:

Դեռ վորքա՞ն թարմ են ու վառ իմ հուշերը:

Յես յերբեք չեմ մոռանա այն ստեղծագործ մարդ-  
կանց, վորոնք վառ լույս տվին իմ ձամբին... Նրանք են,  
